



Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ

ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

01.01.2009թ.-ից ուժը կորցրած է ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը: Սակայն, փոքր և միջին ձեռնարկատիրության համար հարկային բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով ներդրվել են կազմակերպությունների համար շահութահարկի, անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի պարզեցված հաշվարկման մեխանիզմներ, որոնցից կարող են օգտվել փոքր բիզնեսի ներկայացուցիչները, եթե նախորդ օրացուցային տարում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (այդ թվում՝ ԱԱՀ-ին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացումից ստացման ենթակա հասույթը)՝ չի գերազանցել 58,35 մլն. դրամը:

Այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք 2008թ. ընթացքում հանդիսացել են պարզեցված հարկ վճարող, իրացման շրջանառության շեմի որոշման համար հաշվի է առնվում 2008թ. ընթացքում իրենց կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը (ներառյալ՝ վարձավճարները):

Մինչև շեմի գերազանցման պահը՝ փոքր բիզնեսի ներկայացուցիչները չեն համարվում ԱԱՀ վճարող: Սակայն, իրենց հայեցողությամբ, կարող են համարվել ԱԱՀ վճարող, այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնելով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին: Այդ դեպքում ԱԱՀ վճարող կհամարվեն հայտարարությունում նշված օրվանից սկսած (բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրը):

| |
|---|
| <p>Ուշադրություն. Անկախ իրացման շրջանառության նկատմամբ սահմանված շեմից, ԱԱՀ վճարող են հանդիսանում և կազմակերպությունները շահութահարկը, իսկ անհատ ձեռնարկատերերը եկամտահարկը հաշվարկում ընդհանուր սահմանված կարգով՝</p> <ul style="list-style-type: none">➤ ենթակցիզային ապրանքներ արտադրողները կամ ներմուծողները.➤ լիցենզավորման ենթակա այն գործունեություն իրականացնողները կամ լիցենզիա ունեցողները, որոնց գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100,0 հազ. դրամ կամ ավելի.➤ այն կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին).➤ այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի.➤ այն կազմակերպությունը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ |
|---|

ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) և այս դեպքում բոլոր կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ վճարող.

➤ այն առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որի կողմից նախորդ օրացուցային տարում՝

- ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից (բացառությամբ՝ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների առնվազն 80%-ը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին, կամ՝
- վաճառքի նպատակով ձեռք բերվող ապրանքների (բացառությամբ՝ ներմուծման) համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80%-ը վերաբերում է մեկ հարկ վճարողի:

1. Կազմակերպությունների կողմից շահութահարկի հաշվարկումը

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Այն կազմակերպությունների, որոնց նախորդ օրացուցային տարում ստացման ենթակա հասույթը չի գերազանցել 100,0 մլն. դրամը, հաշվապահական հաշվառումը վարում են Կառավարության կողմից սահմանված հարկային հաշվառման հատուկ կանոնակարգով:¹

Շահութահարկով հարկվող օբյեկտը դա հարկվող շահույթն է, որը համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ: Այսինքն՝

$$\text{Հարկվող շահույթ} = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0$$

Համախառն եկամուտը դա՝ հաշվետու տարում բոլոր եկամուտների հանրագումարն է (անկախ դրանց ստացման աղբյուրներից):

Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝

- ապրանքների (արտադրանքի), ծառայությունների իրացումից հասույթը, այլ պաշարների (հումք և նյութեր, կիսապատրաստուկներ, արագամշտ առարկաներ), հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների իրացումից հասույթը (խոսքը գուտ հասույթի մասին է՝ առանց անուղղակի հարկերի),

¹ Ձեռնարկի մշակման ժամանակ շրջանառության մեջ է դրվել փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը հրապարակելու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումից հետո լրացուցիչ կտեղեկացվի:

- սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները և նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքերի մարման գումարները, պարտավորությունների գեղջումից կամ ներումից ստացված եկամուտները, տուժանքները (տույժ, տուգանք), պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից և անվավեր ճանաչված գործարքներից ստացվող եկամուտները, պասիվ այլ եկամուտները (տոկոսներ, ռոյալթիներ և այլն), հաշվետու տարում հայտնաբերված և դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և/կամ ավել ցույց տրված նվազեցումը և այլն:

Ուշադրություն. Եկամուտների թվին չեն դասվում՝ մասնակիցների (բաժնետեր, փայտեր, անդամ) կողմից կազմակերպության կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները, կազմակերպության բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները, հարկային արտոնությունների գումարները, արտարժույթի և արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների, օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները:

Որոնք են նվազեցումները

Օրենքով սահմանված են նվազեցումների հետևյալ տեսակները՝ ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ: Այսինքն՝

$$\text{Նվազեցումներ} = \text{Ծախսեր} + \text{Կորուստներ} + \text{Այլ նվազեցումներ}$$

Որոնք են ծախսերը՝

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով (*տես՝ հավելված 1-ը*):

Ուշադրություն. Առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսերը կարող են նվազեցվել միայն հետևյալ բացառիկ դեպքերում՝

- 01.01.2008թ.-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած այն հարկ վճարողների, որոնց իրացումից հասույթը 2008թ. ընթացքում չի գերազանցել 50,0 մլն. դրամը, 2008թ. ընթացքում ձեռքբերված ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև 01.01.2008թ. դրությամբ առկա ապրանքանյութական արժեքների մնացորդների մասով կատարած ծախսերը, որոնց մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ թաստաթուղթ (այդ թվում՝ միակողմանի գնման ակտ),

- Կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարները,

- Հայաստանում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերը, որոնց մասով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն հաշվարկվել և բյուջե է վճարվել 11% եկամտահարկ: Ընդ որում, այդ

ծախսերը (այդ թվում՝ եկամտահարկի գումարը) նվազեցվում են ամսական կտրվածքով 3,0 մլն. դրամը, իսկ միանվագ գործարքի գծով՝ 300,0 հազ. դրամը:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ նյութական ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, աշխատողների հավաքագրման ծախսերը, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, սոցիալական վճարները, չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը, և այլ պարտադիր վճարները, գովազդային, մարքեթինգի, ներկայացուցչական, հովանավորչական, գործուղման, կադրերի (վերա)պատրաստման ծախսերը, դատական, աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը, բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետազոտական աշխատանքների ծախսերը (որոնք ամորտիզացվում են ոչ նյութական ակտիվների համար օրենքով սահմանված կարգով), գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերը, հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ և ընթացիկ ծախսերը և այլն: Ընդ որում՝

- հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը չեն կապիտալացվում և այդ ծախսերը նվազեցվում են համախառն եկամտից այն տարում, որ տարում կատարվել են,
- բացառությամբ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարների, նորմավորվող մյուս ծախսերը (օրինակ՝ Հայաստանից դուրս կատարված գովազդի, մարքեթինգի, գործուղման, կադրերի (վերա)պատրաստման ծախսերը, ներկայացուցչական ծախսերը և այլն) համախառն եկամտից նվազեցվում են ամբողջությամբ:

Ուշադրություն. Ծախսերի թվին չեն դասվում՝ կազմակերպության սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին (շահաբաժինների կամ նման այլ ձևով), այլ անձի կանոնադրական կապիտալում կազմակերպության կատարած ներդրումները, կազմակերպության կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը, արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը, ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

Ե՞րբ են իրականացվում ծախսերի գծով նվազեցումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումները կատարվում են հետևյալ ձևով՝

- ուղղակի ծախսերի (արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսեր, ոչ ընթացիկ

ակտիվների մնացորդային արժեք և ընթացիկ ակտիվների ձեռքբերման արժեք) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացմանը համապատասխան:

- գործունեության հետ կապված ժամանակաշրջանի ծախսերի (վարչական ծախսեր, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսեր, ոչ արտադրական բնույթի այլ ծախսեր, գործառնական այլ ծախսեր և ինվեստիցիոն ծախսեր, ֆինանսական գործունեության հետ կապված ծախսեր) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են): Ընդ որում, այս ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության պայմաններում:

Որոնք՞ են կորուստները

Կորուստները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ բնական կամ փաստացի այլ կորուստներ, պատահական կորուստներ:

Գույքի **բնական կորուստները** հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, որոնք բացահայտվում են գույքի մթերման, պահպանման և իրացման պրոցեսում: Բնական կամ փաստացի այլ կորուստները համախառն եկամտից նվազեցվում են նորմաների (չափերի) սահմաններում, դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, իսկ նորմաների (չափերի) բացակայության դեպքում այդ կորուստները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Կորուստները պետք է բավարարեն հիմնավորվածության պայմաններին, այսինքն՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա են միայն փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստները: Բնական կամ փաստացի այլ կորուստների նորմաներ (չափեր) սահմանված չլինելու կամ դրանք գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

- վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ (կամ մաս-մաս) կամովին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական (կամ մաս-մաս) հատուցման տարում, կամ՝
- վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝
- անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

Համախառն եկամուտը նվազեցվում է նաև գույքի **պատահական կորուստների** չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

Որպես պատահական կորուստ է ընդունվում գույքի (շենքեր, շինություններ և այլ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշարներ և այլ նյութական արժեքներ) փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը (ոչնչացումը, վնասումը կամ որակական հայտանիշների անկումը), որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների, ինչպես նաև օրենսդրության փոփոխության (գործունեության տեսակի արգելում, ազգայնացում և այլն) հետևանքով (ներառյալ՝ տարերային աղետների հետևանքների կանխման կամ վերացման հետ կապված ծախսերը):

Որոնք են այլ նվազեցումները

Այլ նվազեցումների թվին են դասվում, մասնավորապես՝

- անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարը, և դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները (դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրս գրման կարգը հաստատված է Կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ),
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտը կամ պակաս ցույց տրված նվազեցումը.
- ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք, դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքը (բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25%-ը),
- նախորդ տարիներին առաջացած հարկային վնասը (բացառությամբ՝ կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքերի), որը նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ, և փոխանցվում է հարկային վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ,
- վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը (նվազեցումը կատարվում է աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով ծախսերից անկախ)՝ այդ նվազեցումը վերաբերվում է նաև համատեղության կարգով այլ

կազմակերպություններից աշխատանքի ընդունված հաշմանդամներին և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող հաշմանդամներին:

Հարկային հաշվառումը

Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով՝ ելնելով կազմակերպության կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Ուշադրություն. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝

- օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ և եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով, իսկ այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն,

- վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի (այդ արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի) տարեկան 5%-ից ոչ պակաս չափով, իսկ այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

Այս դրույթները չեն կիրառվում, եթե գործարքի կողմ է հանդիսանում պետությունը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ իրավաբանական անձի միջոցով) կամ շենքն օտարողը, վարձատուն (փոխատուն) հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ:

Շահութահարկի տարեկան դրույքաչափը

Շահութահարկի տարեկան դրույքաչափը սահմանված է 20% որը որոշվում է յուրաքանչյուր տարվա արդյունքներով և ենթակա է վճարման պետական բյուջե մինչև հաշվետու տարվանը հաջորդող տարվա ապրիլի 25-ը (ներառյալ): Ընդ որում՝

- 01.01.2008թ.-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած կազմակերպությունների համար 2008թ. և՝

- 2009թ. ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար 2009թ.

վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավել՝

համախառն եկամտի 10%-ից (վճարված գումարը համարվում է այդ տարիների համար շահութահարկի վերջնական գումար):

| |
|--|
| Շահութահարկ = Հարկվող շահույթ x 20% |
| Համախառն եկամուտ x 2% <= Շահութահարկ <= Համախառն եկամուտ x 10% |
| Ուշադրություն. Այս դրույթը չի տարածվում 2010թ. և հետագա տարիների վրա: |

Կանխավճարները և նվազագույն շահութահարկի վճարումները

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպությունները պարտավոր են կատարել շահութահարկի ամսական վճարումներ՝ շահութահարկի կանխավճարի և նվազագույն շահութահարկի ամսական գումարի առավելագույնի չափով, որոնք վճարվում են յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա 25-ից ոչ ուշ:

Շահութահարկի կանխավճարների գումարը որոշվում է նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-րդ չափով, եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցել է 500,0 հազ. դրամը: Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարվում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով: Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալուց հետո շահութահարկի տարեկան հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ տարվա սկզբից աճող հանրագումարով և նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-ի չափով: Այն կազմակերպությունը, որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող՝ այդ տարվա շահութահարկի պարզեցված հաշվարկը ներկայացնելուց հետո, կամ հանդիսացել է բացառապես պարզեցված հարկ վճարող և/կամ բացառապես շահութահարկի փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ ընթացիկ տարում ԱԱՀ վճարող կամ չվճարող համարվելու հանգամանքից) կարող է շահութահարկի կանխավճարներ չկատարել:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարները, այդ ամսում ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար, հաշվարկվում են նախորդ ամսվա ընթացքում Հայաստանում և նրա սահմաններից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) 1%-ի չափով: Պետական սակագներ կիրառող կազմակերպությունների, առողջապահության և կրթության ոլորտներում ծառայություններ մատուցող կազմակերպությունների, թերթերի (ամսագրերի) տպագրության և իրացման, թանկարժեք քարերի մշակման ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար

Կառավարությունը 14.04.2004թ. N549-Ն որոշմամբ սահմանել է նվազագույն շահութահարկի ամսական գումարի հաշվարկման բազայի լրացուցիչ նվազեցումներ:

Ֆինանսական հաշվետվությունները և շահութահարկի տարեկան հաշվարկը

Ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունները ներկայացնում են միայն շահութահարկի պարզեցված հաշվարկ (*տես՝ հավելված 5-ը*)՝ մինչև այդ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ), իսկ ֆինանսական հաշվետվությունները (հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) հարկային մարմին չեն ներկայացնում:

2. Անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկումը

2.1. Եկամտահարկ

Անհատ ձեռնարկատերերը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկում և վճարում են ինքնուրույնաբար: Տարեկան հարկվող եկամուտը անհատ ձեռնարկատիրոջ տվյալ հաշվետու տարվա համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ: Այսինքն՝

| |
|--|
| $\text{Հարկվող եկամուտ} = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0$ |
|--|

Համախառն եկամուտը դա՝ հաշվետու ժամանակաշրջանում անհատ ձեռնարկատիրոջ ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (բացառությամբ՝ հարկային գործակալների միջոցով հարկված եկամուտների):

| |
|--|
| <p>Ուշադրություն. Եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում՝ պետական նպաստները՝ (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի), բոլոր տեսակի կենսաթոշակները, զոհված զինծառայողի ընտանիքի անդամին և հաշմանդամ դարձած զինծառայողին տրվող միանվագ վճարները, ալիմենտները, արյուն և կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացված գումարները:</p> |
|--|

Որոնք՞ են նվազեցումները

Օրենքով սահմանված են նվազեցումների հետևյալ տեսակները՝ նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցում և ծախսեր: Այսինքն՝

| |
|---|
| $\text{Նվազեցումներ} = \text{Նվազեցվող եկամուտներ} + \text{Անձնական նվազեցում} + \text{Ծախսեր}$ |
|---|

Համախառն եկամուտը նվազեցվում է նաև անհատ ձեռնարկատիրոջ հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարի չափով, ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք, դրամական միջոցներ), նրանց

մատուցած ծառայությունների արժեքի չափով (բայց ոչ ավել հարկվող եկամտի 5%-ից):

Համախառն եկամտից **նվազեցվող եկամուտները** սահմանված են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, իսկ **անձնական նվազեցման չափը** կազմում է ամսական 30,0 հազ. դրամ: Ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված **ծախսերի** չափով (*տես՝ հավելված 1-ը*):

Ուշադրություն. Առանց հիմնավորող փաստաթղթերի ծախսերը կարող են նվազեցվել միայն հետևյալ բացառիկ դեպքերում՝

- 01.01.2008թ.-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած այն հարկ վճարողների, որոնց իրացումից հասույթը 2008թ. ընթացքում չի գերազանցել 50,0 մլն. դրամը, 2008թ. ընթացքում ձեռքբերված ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև 01.01.2008թ. դրությամբ առկա ապրանքանյութական արժեքների մնացորդների մասով կատարած ծախսերը, որոնց մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ թաստաթուղթ (այդ թվում՝ միակողմանի գնման ակտ),
- Կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարները,
- Հայաստանում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերը, որոնց մասով Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի և ենթակետի համաձայն հաշվարկվել և բյուջե է վճարվել 11% եկամտահարկ: Ընդ որում, այդ ծախսերը (այդ թվում՝ եկամտահարկի գումարը) նվազեցվում են ամսական կտրվածքով 3,0 մլն. դրամը, իսկ միանվագ գործարքի գծով՝ 300,0 հազ. դրամը:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ նյութական ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, աշխատողների հավաքագրման ծախսերը, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, սոցիալական վճարները, չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը, և այլ պարտադիր վճարները, գովազդային, մարքեթինգի, ներկայացուցչական, հովանավորչական, գործուղման, կադրերի (վերա)պատրաստման ծախսերը, դատական, աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը, բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետազոտական աշխատանքների ծախսերը, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերը, հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ և ընթացիկ ծախսերը և այլն: Ընդ որում՝

- հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը չեն կապիտալացվում և այդ ծախսերը նվազեցվում են համախառն եկամտից այն տարում, որ տարում կատարվել են,
- բացառությամբ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարների, նորմավորվող մյուս ծախսերը (օրինակ՝ Հայաստանից դուրս կատարված գովազդի, մարքեթինգի, գործուղման, կադրերի (վերա)պատրաստման ծախսերը, ներկայացուցչական ծախսերը և այլն) համախառն եկամտից նվազեցվում են ամբողջությամբ,
- նախորդ տարիներին առաջացած հարկային վնասը, որը ծախսերի գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ, փոխանցվում է հարկային վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

Ուշադրություն. Ծախսերի թվին չեն դասվում այլ անձի կանոնադրական կապիտալում ներդրումները:

Հարկային հաշվառումը

Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով՝ ելնելով անհատ ձեռնարկատիրոջ կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Ուշադրություն. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝

- օտարման դեպքում (բացառությամբ բնագրավման, նվիրատվության կամ այլ ձևով պետությանը օտարման դեպքի) եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ և եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով, իսկ այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն,

- վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձման դեպքի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի (այդ արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի) տարեկան 5%-ից ոչ պակաս չափով, իսկ այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

Եկամտահարկի դրույքաչափերը

Անհատ ձեռնարկատիրոջ տարեկան հարկվող եկամտից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

| Տարեկան հարկվող եկամուտը | Եկամտահարկի գումարը |
|----------------------------------|--|
| Մինչև 960,0 հազ. դրամ (ներառյալ) | Հարկվող եկամտի 10% |
| 960,0 հազ. դրամից ավելի | 96,0 հազ. դրամ + 960,0 հազ. դրամը գերազանցող գումարի 20% |

Անհատ ձեռնարկատերը պարտավոր է եկամտահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Ընդ որում՝

- 01.01.2008թ.-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար 2008թ. և՝

- 2009թ. ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար 2009թ.՝

վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավել՝ համախառն եկամտի 10%-ից (վճարված գումարը համարվում է այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումար):

| |
|---|
| Եկամտահարկ = Հարկվող եկամուտ x 10%/20% |
| Համախառն եկամուտ x 2% <= Եկամտահարկ <= Համախառն եկամուտ x 10% |
| Ուշադրություն. Այս դրույթը չի տարածվում 2010թ. և հետագա տարիների վրա |

Կանխավճարները և նվազագույն եկամտահարկի վճարումները

Տարվա ընթացքում անհատ ձեռնարկատերը կատարում է եկամտահարկի եռամսյակային վճարումներ՝ եկամտահարկի կանխավճարի և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի առավելագույնի չափով: Եկամտահարկի եռամսյակային գումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա ամսվա 15-ից ոչ ուշ:

Եկամտահարկի կանխավճարների գումարը որոշվում է նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարի 1/6-րդ չափով, եթե նախորդ տարվա եկամտահարկի գումարը գերազանցել է 500,0 հազ. դրամը: Այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող՝ այդ տարվա եկամուտների պարզեցված հաշվարկը ներկայացնելուց հետո, կամ հանդիսացել է բացառապես պարզեցված հարկ վճարող և (կամ) բացառապես շահութահարկի փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ ընթացիկ տարում ԱԱՀ վճարող կամ չվճարող համարվելու հանգամանքից) կարող է եկամտահարկի կանխավճարներ չկատարել:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները, այդ ամսում ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար, հաշվարկվում են նախորդ եռամսյակի ընթացքում Հայաստանում և նրա սահմաններից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և

ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) 1%-ի չափով:

Եկամտահարկի տարեկան հաշվարկը

Ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերը ներկայացնում է եկամուտների պարզեցված հաշվարկ (*տես՝ հավելված 5-ը*)՝ մինչև այդ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ): Մինչև հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանից մեկնելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր է եկամտահարկի տարեկան հաշվարկը ներկայացնել ոչ ուշ, քան մեկնելուց 1 ամիս առաջ և հաշվարկված եկամտահարկի գումարը վճարել պետական բյուջե՝ վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո 5-օրյա ժամկետում:

Եկամուտների պարզեցված հաշվարկ կարող է չներկայացնել այն անհատ ձեռնարկատերը, որը հարկային տարվա ընթացքում ստացել է բացառապես նվազեցվող եկամուտներ (այդ թվում՝ գյուղատնտեսությունից):

2.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

Անհատ ձեռնարկատերերը հանդիսանում են ապահովադիր և պարտավոր են կատարել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

Որպես ապահովադիր, անհատ ձեռնարկատերերը՝

- յուրաքանչյուր ամսվա համար վճարում են պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարներ (5,0 հազ. դրամ)՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը (ներառյալ).

- յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև օրացուցային տարվան հաջորդող մարտի 1-ը հարկային մարմին են ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, որի հիման վրա տարվա համար հաշվարկում են պարտադիր սոցիալական ապահովության վճարներ.

- տարվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների և տարվա ընթացքում կատարված նվազագույն վճարների դրական տարբերությունը պետական բյուջե են փոխանցում տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 1-ից ոչ ուշ (իսկ բացասական տարբերությունը հետ չի վերադարձվում և չի փոխանցվում հաջորդ տարիներ):

Ուշադրություն. Տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

- հայտարարագրման ենթակա են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները (առանց նվազեցվող եկամուտների),

- պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկման օբյեկտի որոշման ժամանակ անձնական նվազեցումը (*ամսական 30,0 հազ. դրամ*) հաշվի չի առնվում և ձեռնարկատիրական գործունեության հետ կապված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը նվազեցվում են եկամտահարկին համապատասխան, իսկ

փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը հաշվի չեն առնվում (բացառությամբ՝ այն չհիմնավորված ծախսերի, որոնք օրենքով սահմանված կարգով ենթակա են նվազեցման եկամտահարկով հարկվող օբյեկտը որոշելիս:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների դրույքաչափերը

ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը պարտադիր սոցիալական ապահովության վճարումները կատարում են պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3% դրույքաչափով (բայց ոչ պակաս, քան 60,0 հազ. դրամը):

2.3. Եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով սահմանված արտոնությունների կիրառումը

Լրացուցիչ հնարավորություն է ստեղծվել այն անհատ ձեռնարկատերերի համար, որոնք ունեն 2003-2005թթ. համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություն:

Այդ անհատ ձեռնարկատերերը կարող են օգտվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունից՝ առանց ժամկետային սահմանափակման: Դրա համար անհրաժեշտ է միայն, որպեսզի վերջիններս իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնեն գրավոր դիմում: Այդ դեպքում 01.01.2006թ.-ից հետո հաշվարկված և չվճարված հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Արտոնություններից օգտվելու հնարավորություն ունենալու, սակայն դրանցից չօգտվելու համար այդ անհատ ձեռնարկատերերը չեն ենթարկվի վարչական պատասխանատվության:

3. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային գործակալի պարտավորության կատարումը

3.1. Շահութահարկի գծով

Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ոչ ռեզիդենտ կազմակերպություններին (դրանք են՝ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանից դուրս ստեղծված կազմակերպությունները) եկամուտներ վճարելիս հանդիսանում են հարկային գործակալ (այսինքն՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություններին եկամուտներ վճարելիս նրանց եկամուտներից պահել/զանձել և պետական բյուջե փոխանցել շահութահարկը), եթե՝

- վճարված եկամուտները համապատասխանում են հայաստանյան աղբյուրներից վճարված եկամուտների հասկացությանը,
- եկամուտները փաստացի վճարվել են (այլ ոչ թե՝ հաշվեգրվել):

Վճարված եկամուտները հայաստանյան աղբյուրներին վերագրելու համար կիրառվում է տարածքային սկզբունքը (ծառայությունների մատուցման դեպքում, քանի դեռ հարկային գործակալը չի հիմնավորում եկամուտների առաջացման աղբյուրները, դրանք դիտվում են որպես հայաստանյան աղբյուրներից վճարված): Հարկ է նշել, որ չնայած արտաքին տնտեսական գործունեությունը (ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված գործունեություն, որի դեպքում հարկային գործակալը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի պետական սահմանը հատելը, որը հիմնավորվում է համապատասխան մաքսային փաստաթղթերով և տվյալ գործառնությունում բացակայում են ձեռնարկատիրական գործակալ-միջնորդները) վերագրվում է հայաստանյան աղբյուրներին, սակայն Հայաստանում այդ եկամուտները շահութահարկով հարկման ենթակա չեն:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալի կողմից չի իրականացվում կատարված ծախսերի չափով նվազեցում (բացառությամբ՝ գույքի հավելաճի ձևով վճարվող եկամուտների, որի դեպքում հայաստանյան աղբյուրներից եկամուտները որոշվում են ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից գույքի օտարման և ձեռքբերման գների դրական տարբերությունը /հավելաճը/):

Որպես եկամտի փաստացի վճարում դիտվում են ոչ միայն դրամական վճարումները (կանխիկ կամ անկանխիկ), այլև բնամթերային (այդ թվում՝ փոխանակման գործարքների միջոցով) վճարումները, ինչպես նաև ոչ ռեզիդենտ կազմակերպության և հարկային գործակալի միջև կատարված հաշվանցումները, որոնց արդյունքում նվազում է հարկային գործակալի պարտավորությունը տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության նկատմամբ:

Եկամտի վճարման աղբյուրի մոտ շահութահարկ չի պահվում, եթե՝

- այդ եկամուտները վճարվել են ոչ ռեզիդենտ կազմակերպության առանձնացված ստորաբաժանմանը (մասնաճյուղ, ներկայացուցչություն),
- հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարվում են ոչ ռեզիդենտ կազմակերպությանը, որի գրանցման (ինկորպորացիայի) երկրի հետ գործում է կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ Համաձայնագիր, ըստ որի վճարված եկամուտների մասով հարկերը վճարվում են ոչ ռեզիդենտ կազմակերպության գրանցման (ինկորպորացիայի) երկրում (համապատասխան սերտիֆիկատ-դիմումի առկայության դեպքում):

Հարկային գործակալները

- ոչ ռեզիդենտ կազմակերպությանը հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարելիս եկամտի վճարման աղբյուրի մոտ

շահութահարկը պահում են 10% դրույքաչափով (բացառությամբ՝ ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման/ֆրախտի, որի դեպքում շահութահարկը պահում են 5% դրույքաչափով)

- պահված (գանձված) շահութահարկի գումարը ոչ ռեզիդենտ կազմակերպությանը եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ վճարում են պետական բյուջե,
- եռամսյակը մեկ (հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ) սահմանված ձևով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում են ամփոփ հաշվարկ՝ անցած եռամսյակում ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (*տես հավելված 5-ը*):

Ուշադրություն. Կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը հաշվետու եռամսյակի համար շահութահարկի ամփոփ հաշվարկներ չեն ներկայացնում, եթե այդ եռամսյակում ոչ ռեզիդենտ կազմակերպությունների նկատմամբ չեն հանդիսացել հարկային գործակալ:

3.2. Եկամտահարկի գծով

Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ֆիզիկական անձանց (Հայաստանի քաղաքացիներին կամ օտարերկրացիներին /օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք/) եկամուտներ վճարելիս հանդիսանում են հարկային գործակալ (այսինքն՝ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս կամ հաշվարկելիս նրանց եկամուտներից պահել/գանձել և պետական բյուջե փոխանցել եկամտահարկը): Ֆիզիկական անձանց եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական (կանխիկ կամ անկանխիկ), այնպես էլ բնամթերային (ոչ դրամական) ձևով:

Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ հարկային գործակալի պարտականությունը կատարելու համար, հստակ պետք է տարանջատեն, թե՝

- ում^օ են վճարվում եկամուտները (անհատ ձեռնարկատերին, Հայաստանի քաղաքացուն թե օտարերկրացուն),

- ինչ^օ եկամուտներ են վճարվում:

Ուշադրություն. Հաճախ «Հայաստանի քաղաքացի» և «Հայաստանի ռեզիդենտ» հասկացությունները նույնականացվում են, մինչդեռ Հայաստանի ռեզիդենտ կարող են հանդիսանալ նաև օտարերկրացիները, և հակառակը՝ Հայաստանի քաղաքացի կարող է ճանաչվել որպես Հայաստանի ոչ ռեզիդենտ (եթե առկա չէ օրենքով սահմանված ռեզիդենտության չափանիշներից որևէ մեկը): Հարկային գործակալը եկամտահարկը հաշվարկելիս հիմնվում է ֆիզիկական անձի քաղաքացիության (այլ ոչ թե՝ ռեզիդենտության) չափանիշի վրա:

Եթե հարկային գործակալը եկամուտներ է վճարում **անհատ ձեռնարկատերին**, որի հետ կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (կամ կազմվել է՝ դրան ըստ էության փոխարինող հաշիվ-

ապրանքագիրը), որտեղ նշված են անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման վկայականի համարը, անձնագրի տվյալները, Հայաստանում բնակության հասցեն, ապա եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտահարկ չի պահվում (գանձվում):

Ուշադրություն. Անհատ ձեռնարկատիրոջ հետ օրենքով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիա-իրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում հարկային գործակալները վճարվող եկամտի գումարից, առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները, 11% դրույքաչափով պահում և պետական բյուջե են վճարում եկամտահարկը: ՀԴՄ-ի կտրոններով կատարված ձեռքբերումների մասով ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից 11% դրույքաչափով եկամտահարկ չի պահվում:

Օտարերկրացիներին եկամուտներ վճարելիս հարկային գործակալները եկամտի վճարման աղբյուրի մոտ`

- եկամտահարկի պահում չեն իրականացնում, եթե վճարված եկամուտները կապված են օտարերկրացու կողմից իրականացված արտաքին տնտեսական գործունեության հետ (դա՛ օտարերկրացու անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված գործունեությունն է, որի դեպքում հարկային գործակալը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի պետական սահմանը հատելը, որը հիմնավորվում է համապատասխան մաքսային փաստաթղթերով և տվյալ գործառնությունում բացակայում են միջնորդները), կամ`
- վճարվող այլ եկամուտների ամբողջական գումարից (իրականացնելով միայն շահաբաժինների և ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարների *(տես՝ հավելված 2-ը)* գծով նվազեցումները` բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների, եկամտահարկը հաշվարկում են 10% դրույքաչափով (բացառությամբ` ապահովագրական հատուցումների և փոխադրման/ֆրախտի, որի դեպքում եկամտահարկը հաշվարկում են 5% դրույքաչափով), իսկ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտներից` Հայաստանի քաղաքացիների համար սահմանված 10%/20% դրույքաչափերով:

Հայաստանի քաղաքացիներին եկամուտներ վճարելիս եկամտահարկով հարկման սխեման այլ է` հարկվող եկամուտը որոշելու համար հարկային գործակալը վճարվող եկամուտներից կատարում է նվազեցումներ (նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցում, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ և բարեգործական հատկացումներ` հարկվող եկամտի 5%-ից ոչ ավել): Այսինքն`

$$\text{Հարկվող եկամուտ} = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0$$

Բացառություն են կազմում ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտները (բացի գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերումների դիմաց վճարվող եկամուտների), որոնց հարկումը հարկային գործակալի կողմից կատարվում է առանց որևէ նվազեցումների:

Համախառն եկամուտը դա՝ հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական անձի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է (անկախ դրանց ստացման աղբյուրներից): Սակայն, եկամտի որոշ տեսակներ **չեն ներառվում** համախառն եկամտի մեջ (օրինակ՝ պետական նպաստները /բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության և հիվանդ ընտանիքի անդամի խնամքի նպաստների/, զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ վճարները, ալիմենտները, արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց վճարած գումարները):

Համախառն եկամտից **նվազեցվող եկամուտները** սահմանված են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, իսկ **անձնական նվազեցման չափը** կազմում է ամսական 30,0 հազ. դրամ: Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց եկամուտներ վճարվելու դեպքում նվազեցումները կատարվում են՝ անկախ այլ հարկային գործակալների կողմից այդ անձին վճարված եկամուտներից նվազեցումներ կատարելու հանգամանքից:

Եկամտահարկի դրույքաչափերը

Ֆիզիկական անձի ամսական հարկվող եկամտից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

| Ամսական հարկվող եկամուտը | Եկամտահարկի գումարը |
|---------------------------------|--|
| Մինչև 80,0 հազ. դրամ (ներառյալ) | Հարկվող եկամտի 10% |
| 80,0 հազ. դրամից ավելի | 8,0 հազ. դրամ + 80,0 հազ. դրամը գերազանցող գումարի 20% |

Բացառություն են կազմում ռոյալթիները, վարձավճարները, տոկոսները և ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտները, որոնցից եկամտահարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով:

Հարկային գործակալը

- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկը պետական բյուջե է վճարում աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ,

- այլ եկամուտներից եկամտահարկը պետական բյուջե է վճարում ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ,

- եռամսյակը մեկ (հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ) իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում է սահմանված ձևով հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված (իսկ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտների, պահված և պետական բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին (*տես հավելված 5-ը*).

Ուշադրություն. Կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը հաշվետու եռամսյակի համար եկամտահարկի հաշվարկներ չեն ներկայացնում, եթե այդ եռամսյակում ֆիզիկական անձանց նկատմամբ չեն հանդիսացել հարկային գործակալ:

- տարին մեկ (հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ, *իսկ 2008թ. համար՝ 01.02.2009թ. -ից ոչ ուշ*) իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում է սահմանված ձևով և կարգով անվանական տեղեկություններ (*տես՝ հավելված 5-ը*)՝ անցած տարում իր կողմից ֆիզիկական անձանց վճարած եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, այդ եկամուտներից պահված (գանձված) և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին:

Ուշադրություն. Անվանական տեղեկություններում չեն ներառվում նվազեցվող եկամուտները (այդ թվում՝ գյուղատնտեսությունից): 2009թ. և հետագա տարիների համար անվանական տեղեկություններ չեն ներկայացվում, եթե ֆիզիկական անձանց վճարված եկամուտները չեն գերազանցում անձնական նվազեցումների 12-ապատիկը ($30000 \times 12 = 360000$ դրամը): Տեղեկությունները չներկայացնելու համար հարկային գործակալը վճարում է տուգանք՝ չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 5,0 հազ. դրամի չափով:

- ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) եկամտահարկի գումարները ֆիզիկական անձանցից կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ եկամտահարկի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից 1 ամսվա ընթացքում (սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացուցային տարվա համար):

3.3. ԱԱՀ-ի գծով

Հայաստանում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ՝ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ՝ կոնտրագենտ) հանդիսացող Հայաստանի անձինք (քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման և պետական մարմինները) այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են հարկային պարտավորություն՝ ընդհանուր կարգով և ժամկետներում: Այդ

գործարքների գծով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ (ապրանքների և ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ /ներառյալ՝ 20% դրույքաչափը/ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67% հաշվարկային դրույքաչափով):

ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը և հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

4. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից որպես գործատու պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարումը

Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը **որպես գործատու** պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելիս պետք է տարանջատեն՝

- աշխատանքների (ծառայությունների) դիմաց ում են վճարում (Հայաստանի քաղաքացիներին թե օտարերկրացիներին),
- պայմանագրի ինչպիսի տեսակի հիման վրա են այն վճարում (քաղաքացիա-իրավական, աշխատանքային):

Եթե գործատուն աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարում է օտարերկրացիներին, ապա ազատվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարման պարտականությունից, իսկ եթե վճարում է Հայաստանի քաղաքացիներին, ապա պարտավոր է կատարել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ: Այդ աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարվող աշխատանքի վարձատրությունն և դրան հավասարեցված եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային (ոչ դրամական) ձևով:

Աշխատանքային պայմանագրերի շրջանակներում պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարումը

Գործատուները աշխատանքային պայմանագրերի շրջանակներում իրենց վարձու աշխատողներին վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրան հավասարեցված եկամուտներից (*տես՝ հավելված 3*) յուրաքանչյուր ամիս պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում են տվյալ ամսվա համար հաշվարկված եկամուտներից՝ անկախ վճարման պահից:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների դրույքաչափերը

Գործատուները յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարում են հետևյալ չափերով.

| Հաշվարկման օբյեկտի ամսական չափը | Պարտադիր սոցիալական ապահովության վճարի չափը |
|---|---|
| մինչև 20,0 հազ. դրամ (ներառյալ) | 7,0 հազ. դրամ |
| 20,0 հազ. դրամից մինչև 100,0 հազ. դրամ (ներառյալ) | 7,0 հազ. դրամ գումարած 20,0 հազ. դրամը գերազանցող գումարի 15%-ը |
| 100,0 հազ. դրամից ավելի | 19,0 հազ. դրամ գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 5%-ը: |

Գործատուները աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտներից կատարում են նաև 3%-ի չափով պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ:

Գործատուները յուրաքանչյուր ամիս հաշվարկում են պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, դրանց հաշվին օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին հաշվարկում ու վճարում են ապահովագրական և թաղման նպաստներ, որից հետո դրանց տարբերությունը փոխանցում են պետական բյուջե մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ)՝ յուրաքանչյուր ամսում փաստացի վճարված ապահովագրական և թաղման նպաստների գումարների չափով (բայց ոչ ավելի, քան տվյալ ամսվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարը)՝ պակասեցումը կատարելով հաջորդ ամսվա 20-ին:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարման առանձնահատկությունները

Քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարվող աշխատանքներից (մատուցվող ծառայություններից) ստացվող եկամուտներն են, մասնավորապես՝

- կապալի (այդ թվում՝ շինարարական, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալի) պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- մանկավարժական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- հանձնարարության և գործակալության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը:

Գործատուները քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների (մատուցվող ծառայությունների) դիմաց աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրան հավասարեցված եկամուտներից 3%-ի չափով պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն կատարում և աշխատողներին ապահովագրական ու թաղման նպաստներ չեն հատկացվում:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվետվությունների ներկայացումը

Գործատուն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝

- եռամսյակային հաշվետվություն՝ ամսական կտրվածքով (*տես հավելված 5-ը*) մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը (ներառյալ), եթե նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում ունեցել է մինչև 5 (ներառյալ) վարձու աշխատող, կամ՝

- ամսական հաշվետվություն՝ մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ), եթե նախորդ եռամսյակի առնվազն մեկ ամսում ունեցել է 6 և ավելի վարձու աշխատող:

Ուշադրություն. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին չեն ներկայացնում այն հաշվետու ժամանակաշրջանների (եռամսյակ, ամիս), որում չեն հանդիսացել գործատու: Ընդ որում՝ կազմակերպության տնօրենի որպես այդպիսին պետական մարմիններում գրանցված լինելու (գրանցելուց չհանվելու) փաստը դեռևս հիմք չի հանդիսանում, որ կազմակերպությունը հանդիսանում է գործատու, քանի դեռ կազմակերպության և այդ քաղաքացու միջև բացակայում է կամ լուծվել է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագիրը:

Եթե օրենքներով և Հայաստանի միջազգային պայմանագրերով պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունը դրված է վարձու աշխատողների վրա, ապա գործատուն պարտավոր է մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմին տեղեկություններ հայտնել վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին:

Ուշադրություն. Տեղեկությունները չներկայացնելու համար գործատուն վճարում է տուգանք՝ չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 25,0 հազ. դրամի չափով:

5. Ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցումը

Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող կամ տեղափոխող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պարտավոր են վարել

դրանց հաշվառումը՝ գրանցումներ կատարելով առաքումների գրանցման գրքում (առաքման գրքեր):

Ուշադրություն. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց համար օրենքով սահմանված կարգով պարտադիր է ՀԴՄ-ների կիրառումը, ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանահակահատվածում առաքման գրքեր չեն վարում:

Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով), որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, պարտավոր են առևտրի իրականացման վայրում վարել արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման գիրք (հասույթի գրքեր):

Ուշադրություն. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանահակահատվածում հասույթի գրքեր չեն վարում:

6. Դրամարկղային գործառնությունները

Դրամարկղային գործառնությունները իրականացվում են դրամարկղի կամ հաշվետու անձանց միջոցով: Կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները (ներառյալ՝ կանխավճարները, առհաշիվ տրված կանխիկ դրամի հաշվին կատարվող վճարումները):

Դրամարկղային գործառնությունների իրականացման, կանխիկ դրամի պահպանման հետ կապված սահմանափակումներն են՝

- ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը չպետք է գերազանցի 300,0 հազ. դրամը,
- 1 ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը չպետք է գերազանցի 3,0 մլն. դրամը:

Ուշադրություն. Սահմանափակումները չեն տարածվում, մասնավորապես՝

- աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների վրա.
- նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների և այլ համանման վճարումների վրա.
- գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումների վրա.
- ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների վրա.
- ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների ու կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումների վրա.
- ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների վրա.

➤ գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումների վրա:

Սահմանափակումներ են նախատեսված նաև դրամարկղից առհաշիվ տրվող կանխիկ գումարների նկատմամբ՝ առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե այդ գումարը ստացող անձի կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն դեռևս չի ներկայացվել (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել): Սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում 2-ը:

Ուշադրություն. *Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները չպահպանելու դեպքում* գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5%-ի չափով (բայց ոչ պակաս քան 50,0 հազ. դրամը և ոչ ավելի քան 1,0 մլն. դրամը), իսկ սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո 1 տարվա ընթացքում դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10%-ի չափով (բայց ոչ պակաս քան 100,0 հազ. դրամը և ոչ ավելի քան 2,0 մլն. դրամը): *Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում* գանձվում է տուգանք՝ 50,0 հազ. դրամի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո 1 տարվա ընթացքում դրանք կրկին չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ 100,0 հազ. դրամի չափով: *Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում* գանձվում է տուգանք՝ 20,0 հազ. դրամի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումն արձանագրելուց հետո 1 տարվա ընթացքում դրանք կրկին խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ 50,0 հազ. դրամի չափով:

Կազմակերպության դրամարկղ(ներ)ում պահվող արժեքների պահպանման և փոխադրման անվտանգության ապահովության պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը կամ այդ հարցում նրան փոխարինող անձը: Կանխիկ դրամի պահպանման գործում պարտականություններ ունի նաև գանձապահը, որն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից:

Կազմակերպությունները՝

- որոնք կատարած աշխատանքների, մատուցած ծառայությունների, վաճառած ապրանքների և արտադրանքի դիմաց ստացվող կանխիկ դրամը հավաքում են նաև կազմակերպության տարածքից դուրս (լիազորված կամ համապատասխան իրավունք ունեցող անձանց միջոցով), գումարը մուտքագրում են դրամարկղ կամ բանկային հաշիվ՝

կանխիկ դրամի հավաքման պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում,

- որտեղ ներդրված են ՀԴՄ-ներ, դրանց միջոցով օրական գրանցված տվյալների հիման վրա ստացված կանխիկ դրամը մուտքի օրդերով մուտքագրում են դրամարկղ կամ բանկային հաշիվ՝ կանխիկ դրամի ստացման օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում,
- դրամարկղային գրքում գրանցումը կատարում են յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակման օրը:

7. ՀԴՄ-ների կիրառման կանոնները

Հայաստանում կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում պարտավոր են կիրառել ՀԴՄ-ներ (բացառությամբ՝ *հավելված 4-ում* նշված դեպքերի):

Ուշադրություն. *ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում ՀԴՄ-ի բացակայության համար* կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 300,0 հազ. դրամի չափով, իսկ տուգանքը նշանակելուց հետո 1 տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում՝ 600,0 հազ. դրամի չափով և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է մինչև ՀԴՄ-ի ներդրումը: *ՀԴՄ-ի գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտմամբ ՀԴՄ-ի կիրառման համար* կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում են 150,0 հազ. դրամի չափով, տուգանքը նշանակելուց հետո 1 տարվա ընթացքում խախտումն 1-ին անգամ կրկնելու դեպքում՝ 300,0 հազ. դրամի չափով և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով, իսկ տուգանքը նշանակելուց հետո 1 տարվա ընթացքում խախտումը 2-րդ և ավելի անգամ կրկնելու դեպքում՝ 600,0 հազ. դրամի չափով և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում: Տուգանքները խախտման փաստն արձանագրելուց հետո 2-ամսյա ժամկետում չնուծելու դեպքում կրկնապատկվում են:

8. Միջազգային պայմանագրերի կիրառումը

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հավելված 1

Ծախսերի անհրաժեշտությունը և փաստաթղթերով հիմնավորվածությունը

Ծախսերը համարվում են անհրաժեշտ, եթե անմիջականորեն և բացառապես կապված են ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման հետ, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսեր:

Ծախսը համարվում է փաստաթղթերով հիմնավորված, եթե ձեռքբերումը (ծախսումը) փաստաթղթերով հիմնավորված է: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Կառավարության 25.08.1998թ. N 525 որոշմամբ, համաձայն որի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառվող ՀԴՄ-ների կտրոնները (իրեն վերաբերող վավերապայմանները ձեռքբերողի կողմից ինքնուրույնաբար լրացնելու դեպքում՝ անմիջականորեն ՀԴՄ-ի կտրոնի վրա կամ դրան կցված փաստաթղթում) ընդունվում են որպես ծախսերը հիմնավորող փաստաթուղթ, եթե դրանց հանրագումարը չի գերազանցում ամսական 3,0 մլն. դրամը՝ միանվագ գործարքը 300,0 հազ. դրամը չգերազանցելու դեպքում (նշվածը վերաբերվում է նաև ժամանակի ընթացքում մաշված ՀԴՄ-ների կտրոններին, եթե առկա են դրան համապատասխանող հաշվարկային փաստաթուղթը կամ այդ ՀԴՄ-ի կտրոնի ընթեռնելի պատճենը):

Քաղվածք Գեկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին
հրահանգից

Փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և չափերով տրվող փոխհատուցումները, մասնավորապես՝ գործուղման վճարները, դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների կատարման համար վճարները, հատուկ սնունդը:

Հատուկ սննդի գծով աշխատողներին եկամուտներ վճարելու դեպքում համախառն եկամտից նվազեցվում են միայն բնամթերային (ոչ դրամական) ձևով տրամադրված եկամուտները:

Փոխհատուցման վճարներ են համարվում նաև ՀՀ առաջնությունների և մարզային առաջնությունների, ՀՀ տարածքում ՀՀ-ի կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարերի և ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումների մասնակիցների գիշերավարձի ու սննդի օրական վճարները, ինչպես նաև ազգային հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների մասնակիցների գիշերավարձի և սննդի օրական վճարները:

ՀՀ օրենսդրությամբ փոխհատուցման վճարների նորմաներ սահմանված չլինելու դեպքում համախառն եկամտից նվազեցվում են կատարված ծախսերի փոխհատուցման այն գումարները, որոնք հիմնավորված են փաստաթղթերով:

Հավելված 3

Աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վճարվող աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտները

Դա աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով (անձնական բնույթի ծառայություններ մատուցելու մասին, տնաշխատների հետ, համատեղությամբ, ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով), սեզոնային) և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի շրջանակներում հետևյալ վճարումներն են (վարձատրությունն է)՝

ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), ներառյալ՝

- արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,

- գիշերային աշխատանքի վարձատրությունը,

- ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,

- լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ դասային և հատուկ կոչումների, գիտական աստիճանների համար) և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),

- աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման և օգնության գումարների),

- պարապուրդի ժամանակ վճարումը,

- օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,

- լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,

- առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),

- աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.

բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարվի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.

գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը.

դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթիների):

Հավելված 4

Այն ոլորտները, որտեղ ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր չէ

- բնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցում,
- կրպակներում թերթերի և ամսագրերի վաճառք, եթե թերթերի և ամսագրերի իրացման տեսակարար կշիռը գերազանցում է ապրանքաշրջանառության ծավալի 50%-ը,
- վիճակախաղի տոմսերի վաճառք,
- ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով երթևեկելու համար երթևեկության տոմսերի վաճառք,
- ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովում,
- առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառասեղաններից գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառք,
- ձեռքի սայլակներից, զամբյուղներից, արկղերից (ներառյալ՝ մթնոլորտային տեղումներից պոլիէթիլենային թաղանթով կամ այլ նյութերով պաշտպանված) պարենային և ոչ պարենային ապրանքների (բացառությամբ այնպիսի ապրանքների, որոնք պահանջում են պահպանման և վաճառքի հատուկ պայմաններ) շրջիկ և շրջածախ մանրածախ վաճառք,
- գյուղական բնակավայրերի մանկաբարձական-բուժական կետերում գտնվող դեղատներից դեղանյութերի վաճառք,
- կրպակներից ոչ ոգելից խմիչքների լցնովի վաճառք,
- բուսական յուղի և կշռովի բանջարաբոստանային մշակաբույսերի, ինչպես նաև ցիստեռններից (տակառներից) լցնովի գարեջրի և կվասի վաճառք,
- կրոնական կազմակերպությունների կողմից կրոնական պարագաների իրացում և կրոնական ծիսակատարությունների ծառայությունների մատուցում,
- փոստային ծառայությունների դիմաց վճարումը հավաստող փոստային վճարման պետական նշանների (փոստային նամականիշերի և այլ նշանների) անվանական արժեքով իրացում,
- նոտարական և փաստաբանական ծառայությունների իրականացում,
- փոստային և սուրհանդակային գործունեության իրականացում,

- փորձագիտական բնագավառում գիտահետազոտական, գիտատեխնիկական և գիտամեթոդական աշխատանքների իրականացում,
- ավտոտրանսպորտային միջոցը տաքսամետրով (սակաչափիչով) կահավորված լինելու դեպքում՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների իրականացում:

Հավելված 5

**Հարկային մարմին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների ձևերը
և դրանց լրացման կարգերը**

| | | | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|--|-------------------------|
| ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ <i>(«Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելված)</i> | Փաստաթղթի համարը <hr/> <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i> | | | | | | | | |
| 1. Հարկ վճարողի անվանումը | 2. Հարկ վճարողի հասցեն | | | | | | | | |
| 3. ՀՎՀՀ <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table> | | | | | | | | | 4. Հեռախոսի համարը |
| | | | | | | | | | |
| 5. Հաշվետու տարի <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table> | | | | | | | | | 6. Ներկայացման ամսաթիվը |
| | | | | | | | | | |

| Ցուցանիշները | Տողը | Գումարը |
|---|--------------|------------|
| 1. Հաշվետու տարվա համախառն եկամուտը | | |
| ա) ապրանքների (արտադրանքի) իրացումից և այլ ակտիվների օտարումից, ծառայությունների մատուցումից հասույթը, տոկոսները և վարձավճարները | 0101 | |
| բ) հաշվետու տարում հայտնաբերված (նաև՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավել) ցույց տրված եկամուտները (նվազեցումները) | 0102 | |
| գ) այլ եկամուտները | 0103 | |
| Ընդամենը համախառն եկամուտը՝ եկամուտների հանրագումարը (տող0101+տող0102+տող0103) | 0100 | |
| - այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով | 0100Ա | |
| 2. Համախառն եկամտից նվազեցումները | | |
| 2.1. Համախառն եկամտից նվազեցվող ուղղակի ծախսերը | 0201 | () |
| 2.2. Համախառն եկամտից նվազեցվող ժամանակաշրջանի ծախսերը | 0202 | () |
| 2.3. Համախառն եկամտից նվազեցվող կորուստները | 0203 | () |
| 2.4. Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները, այդ թվում՝ | 0204 | () |
| ա) հաշվետու տարում հայտնաբերված (նաև՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը) | 0204Ա | () |
| բ) նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը | 0204Բ | () |
| գ) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված | 0204Գ | () |

| | | |
|--|--------------|------------|
| <i>աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը</i> | | |
| 2. Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (տող0201+տող0202+տող0203+տող0204) | 0200 | () |
| - այդ թվում՝ <i>հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով</i> | <i>0200Ա</i> | () |
| 3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)՝ հաշվի առած ստուգման արդյունքները ((տող0100-տող0100Ա)+(տող0200-տող0200Ա)) | 0300 | |
| 4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները | 0400 | () |
| 5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400) | 0500 | |
| 6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը | 0600 | |
| - այդ թվում՝ <i>ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը</i> | <i>0600Ա</i> | |
| 7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները | | |
| Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը | 0701 | () |
| Հաշվետու տարվանը վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը | 0702 | () |
| Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները | 0703 | |
| Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703) | 0700 | |
| Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703) | <i>0700Ա</i> | () |
| 8. Օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարը | | |
| Նախորդ տարիների շահութահարկի գումարից օտարերկրյա պետություններում վճարված հարկի չնվազեցված գումարը | 0801 | () |
| Հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարի նվազեցվող մասը | 0802 | () |
| Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը | 0800 | () |
| Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0801+տող0802-տող0800) | <i>0800Ա</i> | () |
| 9. Ջեյչ սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը | | |
| Նախորդ տարիների շահութահարկի գումարից մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների չնվազեցված գումարը | 0901 | () |
| Հաշվետու տարում մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտները | 0902 | () |
| Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը | 0900 | () |
| <i>Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաջորդ</i> | | |

| | | |
|---|-------|-----|
| <i>տարիներ փոխանցվող գումարը (տող0901+տող0902+տող0900)</i> | 0900Ա | () |
| 10. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո (տող0700+տող0800+տող0900) | 1000 | |
| 11. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները | 1100 | () |
| 12. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո (տող1000+տող1100) | 1200 | |
| 13. ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը | | |
| Շահութահարկի գումարը՝ արտոնությունները կիրառելուց հետո (տող0700+տող1100, եթե ռեզիդենտը չի օգտվում 100% արտոնությունից, կամ 0) | 1301 | |
| Հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը | 1302 | |
| Շահութահարկի տարեկան գումարը գերազանցող նվազագույն շահութահարկի գումարը (տող1302-տող1301), եթե (տող1302-տող1301)>0, կամ 0) | 1303 | |
| Հաշվետու տարվա շահութահարկի գումարը (տող1200+տող1303) | 1300 | |
| 14. Նվազագույն շահութահարկի վճարումները | | |
| Նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը | 1401 | |
| Հաշվետու տարում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները | 1402 | |
| Հաջորդ տարիներ փոխանցվող՝ չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը (տող1401+տող1402) | 1400 | |

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարները՝ ըստ ամիսների

Աղյուսակ 1

| Ամիս | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդամենը |
|--------|---|----|-----|----|---|----|-----|------|----|---|----|-----|----------|
| Գումար | | | | | | | | | | | | | |

ՀՀ կառավարության 19.12.2002թ. օրենքի (Գազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման) կարգը հաստատելու մասին N 2052-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան.

Աղյուսակ 2

| N | Դեբիտորական (կրեդիտորական) պարտքեր | Նախորդ տարի | Հաշվետու տարի |
|---|------------------------------------|-------------|---------------|
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծումը («Այո»/«Ոչ») | | |
| 2 | Պահուստի (պահուստաֆոնդի) մեծությունը | | |
| 3 | Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի գումարը | | |
| 4 | Դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարը | | |

Հարկման նպատակով հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետները

Աղյուսակ 3

| N | Հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի անվանումը (խումբը) | Ամորտիզացիոն ժամկետ (ամիս) | |
|----|--|----------------------------|---------------|
| | | Նախորդ տարի | Հաշվետու տարի |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | | | |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |
| 6 | | | |
| 7 | | | |
| 8 | | | |
| 9 | | | |
| 10 | | | |

Տնօրեն (ազգանուն, անուն
և ստորագրություն)

Հարկ վճարողի
կնիքը

Հաշվապահ (ազգանուն, անուն
և ստորագրություն)

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

Շահութահարկի պարզեցված հաշվարկի լրացման

Շահութահարկի հաշվարկում (այսուհետ՝ Հաշվարկ) լրացվում են. «Փաստաթղթի համարը» մասում՝ հարկային մարմնում հարկ վճարողի (ռեզիդենտի) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հարկ վճարողի անվանումը» մասում՝ ռեզիդենտի ֆիրմային անվանումը և կազմակերպական իրավական ձևը, «Հարկ վճարողի հասցեն» մասում՝ ռեզիդենտի իրավաբանական հասցեն, «ՀՎՀՀ» մասում՝ ռեզիդենտի հարկ վճարողի հաշվառման համարը, «Հեռախոսի համարը» մասում՝ ռեզիդենտի տնօրենի (ղեկավարի) և (կամ) հաշվապահի հեռախոսի համարը, «Հաշվետու տարի» մասում՝ այն տարին, որի համար լրացվում է Հաշվարկը, «Ներկայացման ամսաթիվը» մասում՝ ռեզիդենտի կողմից հարկային մարմին Հաշվարկը ներկայացնելու ամսաթիվը:

Հաշվարկում թվային տվյալները լրացվում են հազար դրամներով՝ ստորակետից հետո տասնորդական թվերի նշումով, իսկ շահութահարկի հաշվարկին մասնակցող հանվող գումարները (բացասական մեծությունները) ցույց են տրվում փակագծերի մեջ: Հաշվարկի վերջին էջի համապատասխան մասում նշվում են ռեզիդենտի ղեկավարի և հաշվապահի անունը (ազգանունը), որոնք ստորագրում են Հաշվարկը, և Հաշվարկը կնքվում է ռեզիդենտի կնիքով:

1. Հաշվարկի 1-ին՝ բաժնում («Հաշվետու տարվա համախառն եկամուտը») ցույց է տրվում հաշվետու ժամանակաշրջանում ռեզիդենտի գործունեության արդյունքում ստացված համախառն եկամուտը՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ, 24-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներին համապատասխան: Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չհամարվող տարրերը: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0101 տող՝ ապրանքների (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության դեպքում), սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը), ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը), օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքներից միջնորդավճարների ձևով (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևերով) ստացվող եկամուտները (իրացումից հասույթը), հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը), վարկի, փոխառության, ֆինանսական վարձակալության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցումը, գործառնական վարձակալության դիմաց ստացվող վճարները և այլ հատուցումը (վարձավճարները): 0102 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (նաև՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտները կամ ավել ցույց տրված նվազեցումները: 0103 տող՝ ստացվող այլ եկամուտները: 0100 տող՝ ստացվող բոլոր եկամուտները (համախառն եկամուտը)՝ որպես 0101-ից 0103 տողերի հանրագումար (այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու ժամանակաշրջանում ստացվող եկամուտները): 0100U տող՝ «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով ստացվող եկամուտները (բացառությամբ՝ «Հաստատագրված վճարների

մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված դեպքերում հաստատագրված վճարներով հարկվող գործունեության առանձին տեսակների համար օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցման եռամսյակների (կամ ամիսների) համար հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամուտների):

2. Հաշվարկի 2-րդ բաժնում («Համախառն եկամտից նվազեցումները») ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից կատարված՝ Օրենքի 9-րդ հոդվածով դասակարգված նվազեցումները՝ ծախսերը (Օրենքի 10-րդ, 12-17-րդ, 19-րդ, 32-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներին համապատասխան), փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստները (Օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան) և այլ նվազեցումները (Օրենքի 18-րդ, 20-րդ, 23-րդ, 25-29-րդ և 32-րդ հոդվածներին համապատասխան): Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չհամարվող տարրերը և 16-րդ հոդվածի համաձայն համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0201 տող՝ իրացված ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, մատուցված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը (ուղղակի ծախսեր): *0202 տող*՝ ռեզիդենտի կողմից կատարված վարչական, իրացման և ոչ արտադրական այլ ծախսերը, ինչպես նաև ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը (ժամանակաշրջանի ծախսեր): *0203 տող*՝ գույքի պատահական և բնական կորուստները, ինչպես նաև բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող (այդ թվում՝ այդպիսի չափեր սահմանված չլինելու դեպքում) կորուստները (Օրենքով սահմանված դեպքերում): *0204 տող*՝ ռեզիդենտի այլ նվազեցումները (այդ թվում՝ հաշվետու տարում հայտնաբերված (նաև՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը), նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը, ռեզիդենտի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը՝ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն): *0204U տող*՝ հաշվետու տարում հայտնաբերված (նաև՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտները կամ պակաս ցույց տրված նվազեցումները: *0204F տող*՝ համախառն եկամտից նվազեցվող՝ նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը (Օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան), որի գծով համախառն եկամտից նվազեցումը կատարվում է միայն հարկային մարմին ներկայացված՝ նախորդ տարվա շահութահարկի հաշվարկում նշված հարկային վնասի գումարը ցույց տալու դեպքում (բացառությամբ՝ նախորդ տարում Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի): *0204G տող*՝ ռեզիդենտի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը՝ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն: *0200 տող*՝ համախառն եկամտից կատարված բոլոր նվազեցումները՝ որպես 0201, 0202, 0203 և 0204 տողերի հանրագումար (այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում կատարված նվազեցումները): *0200U տող*՝ «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով կատարված նվազեցումները (բացառությամբ՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված դեպքերում հաստատագրված վճարներով հարկվող գործունեության առանձին

տեսակների համար օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցման եռամսյակների (կամ ամիսների) համար հաշվեգրման եղանակով հաշվարկված նվազեցումները):

3. Հաշվարկի 3-րդ բաժնում («Հարկվող շահույթը (հարկային վնասը)» և *0300 տողում* ցույց են տրվում հաշվետու տարում շահութահարկով հարկվող գործունեությունից ռեզիդենտի ստացված հարկվող շահույթը (համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունը) կամ հարկային վնասը (համախառն եկամտի և նվազեցումների բացասական տարբերությունը)՝ որպես 0100 և 0100Ա տողերի տարբերության ու 0200 և 0200Ա տողերի տարբերության հանրագումար:

4. Հաշվարկի 4-րդ բաժնում («Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները») և *0400 տողում* ցույց են տրվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնության (այդ թվում՝ Օրենքի 36.3 հոդվածով սահմանված արտոնության) գումարները: Այս բաժինը լրացվում է նաև օրենքով սահմանված շահութահարկի ազատման արտոնությունների դեպքում:

5. Հաշվարկի 5-րդ բաժնում («Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները») և *0500 տողում* ցույց են տրվում հաշվետու տարվա հարկվող շահույթը (հաշվի առած օրենքով սահմանված հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնությունները)՝ որպես 0300 և 0400 տողերի հանրագումար, կամ հարկային վնասը՝ 0300 տողում նշված գումարի չափով:

6. Հաշվարկի 6-րդ բաժնում («Հաշվետու տարվա շահութահարկի գումարը») ցույց են տրվում հաշվետու տարվա հաշվարկված շահութահարկի գումարը (*տող0600*)՝ որպես 0500 տողի և 20%-ի արտադրյալ՝ ներառելով նաև հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարները (*տող0600Ա*):

7. Հաշվարկի 7-րդ բաժնում («Շահութահարկի վճարման հետաձգման արտոնությունները») ցույց են տրվում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունների (այդ թվում՝ Օրենքի 40-րդ և 40¹-րդ հոդվածներով սահմանված) գումարները: Համապատասխան տողերում լրացվում են.

0701 տող՝ նախորդ տարիներում հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ չեն ստացվել: 0702 տող՝ հաշվետու տարում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու դեպքում՝ հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել: 0703 տող՝ հաշվետու տարում ստացված գումարներին համապատասխան շահութահարկի գումարները, որոնք վերաբերվում են նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարներին: 0700 տող՝ հաշվետու տարվա շահութահարկի գումարը (հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը)՝ որպես 0600, 0702 և 0703 տողերի հանրագումար: 0700Ա տող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել՝ որպես 0701, 0702 և 0703 տողերի հանրագումար:

8. Հաշվարկի 8-րդ բաժնում («Օտարերկրյա պետություններում վճարված շահութահարկի գումարը») ցույց են տրվում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված (գանձված) հարկի գումարների նվազեցվող մասը՝ Օրենքի 52-րդ

հողվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչև շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը և Օրենքի 52¹-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից): Համապատասխան տողերում լրացվում են.

0801 տող՝ նախորդ հաշվետու տարիներում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից և ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից: 0802 տող՝ հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հետագա տարիների շահութահարկի գումարներից: 0800 տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու և նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից: 0800U տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու և նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների այն մասը, որը ենթակա է հաշվանցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0801 և 0802 տողերի հանրագումարի ու 0800 տողի գումարի տարբերություն:

9. Հաշվարկի 9-րդ բաժնում («Զեղչ սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը») ցույց են տրվում առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ կառավարության սահմանած զեղչ սակագներով կամ անվճար մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարները՝ Օրենքի 52¹-րդ հոդվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչև շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 և 0800 տողերի հանրագումարից): Համապատասխան տողերում լրացվում են.

0901 տող՝ նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից և ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից: 0902 տող՝ հաշվետու տարում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից: 0900 տող՝ հաշվետու և նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից: 0900U տող՝ հաշվետու և նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0901 և 0902 տողերի հանրագումարի ու 0900 տողի գումարի տարբերություն:

10. Հաշվարկի 10-րդ բաժնում («Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո») և 1000 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ հարկվող շահույթի նվազեցման և շահութահարկի վճարման ժամկետի արտոնությունները կիրառելուց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում վճարված հարկի և զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 0700, 0800 և 0900 տողերի հանրագումար:

11. Հաշվարկի 11-րդ բաժնում («Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները») և 1100 տողում ցույց են տրվում շահութահարկի նվազեցման արտոնությունների (այդ թվում՝ Օրենքի 36-րդ, 36¹-րդ, 36.2-րդ, 39-րդ, 39¹-րդ և 39.2-րդ հոդվածներով սահմանված արտոնությունների) գումարները, որոնք նվազեցվում են մինչև Օրենքի 52¹-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից):

12. Հաշվարկի 12-րդ բաժնում («Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո») և 1200 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում վճարված հարկի և զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 1000 և 1100 տողերի հանրագումար (եթե [տող1000]+տող[1100]<0, ապա [տող1200]=0):

13. Հաշվարկի 13-րդ բաժնում («Հաշվետու տարվա շահութահարկի գումարը») ցույց է տրվում հաշվետու տարվա շահութահարկի գումարը՝ հաշվի առած Օրենքի 47¹-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը (որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար): Համապատասխան տողերում լրացվում են.

1301 տող՝ շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց հետո (այսինքն՝ 0700 և 1000 տողերի հանրագումար), որը համեմատվում է հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարի հետ (հաշվետու տարում շահութահարկից ազատված կամ 100%-ով արտոնությունից օգտվող ռեզիդենտները այս տողը չեն լրացնում): 1302 տող՝ հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարը՝ որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար: 1303 տող՝ հաշվետու համար լրացուցիչ վճարման ենթակա նվազագույն շահութահարկի գումարը (լրացվում է, եթե 1302 և 1301 տողերի տարբերությունը դրական է): 1300 տող՝ հաշվետու տարվա համար վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ որպես 1200 և 1303 տողերի հանրագումար (եթե 1302 և 1301 տողերի տարբերությունը բացասական է, ապա այդ տարբերությունը առաջնահերթ հաշվանցվում է նախորդ տարիներին վճարված և շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարներից):

14. Հաշվարկի 14-րդ բաժնում («Նվազագույն շահութահարկի վճարումները») ցույց են տրվում վճարված և շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ Օրենքի 47¹-րդ հոդվածին համապատասխան: Համապատասխան տողերում լրացվում են.

1401 տող՝ նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները: 1402 տող՝ հաշվետու տարում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները: 1400 տող՝ հաջորդ տարիներ փոխանցվող՝ վճարված և չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ որպես 1401 և 1402 տողերի հանրագումար:

15. Աղյուսակ 1-ում նշվում են հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի ամսական գումարները և դրանց հանրագումարը (նվազագույն շահութահարկի տարեկան գումարը):

16. Աղյուսակ 2-ում նշվում են ըստ Օրենքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժե» և «ժզ» ենթակետերի, 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.12.2002թ. «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 2052-Ն որոշման՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված հետևյալ տեղեկությունները. նախորդ և հաշվետու տարիներում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծման մասին (1-ին տող 3-րդ և 4-րդ սյունյակներ), սահմանված կարգով ստեղծված դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի)՝ նախորդ և հաշվետու տարիների դեկտեմբերի 31-ի ավարտին մեծության մասին (2-րդ տող 3-րդ և 4-րդ սյունյակներ), դուրս գրված անհուսալի դեբիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչև կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ և հաշվետու տարիների ավարտին չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (3-րդ տող 3-րդ և 4-րդ սյունյակներ), դուրս գրված անհուսալի կրեդիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչև կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ և հաշվետու տարիների ավարտին չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (4-րդ տող 3-րդ և 4-րդ սյունյակներ):

17. Աղյուսակ 3-ում նշվում են Օրենքի 3-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված՝ նախորդ և հաշվետու տարիներում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների համար, իրենց կողմից ընտրված ամորտիզացիոն ժամկետները (ամիսների թվով արտահայտված)՝ ըստ հիմնական միջոցների կամ դրանց խմբերի (3-րդ և 4-րդ սյունյակներ): Տողերի քանակը չբավարարելու դեպքում այն շարունակվում է հաշվարկին կից ներկայացված լրացուցիչ թերթերում՝ պահպանելով աղյուսակի կառուցվածքը:

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2008 թվականի
սեպտեմբերի 4-ի N 1038-Ն որոշման

**Պարզեցված հաշվարկ
Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների**

Բաժին I. Քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտներ, աշխատանքի վարձատրություն, դրան հավասարեցված այլ վճարումներ

| | | | |
|---|---------------------------|------------------------|------------------------|
| Քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտները | [1] | | |
| Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով անհրաժեշտ ծախսերը | [2] | | |
| Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | [3] | | |
| Այլ նվազեցումներ | [4] | | |
| Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունքը | [5] | | |
| Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտների տեսակը | Եկամտի գումարը [6] | Դրույքաչափը [7] | Եկամտահարկը [8] |
| Ռոյալթի | [9] | | |
| Տոկոս | [10] | | |
| Վարձակալության դիմաց վճար (վարձավճար) | [11] | | |
| Գույքի օտարման դիմաց եկամուտ | [12] | | |
| | Ընդամենը | [13] | |

- [1] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից (բացառությամբ II բաժնում նշվածի) եկամուտները (բացառությամբ ռոյալթիների, տոկոսների, վարձավճարների, գույքի օտարման դիմաց եկամուտների և նվազեցվող եկամուտների)
- [2] տողում նշվում են [1] տողում նշված քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով նվազեցվող ծախսերը
- [3] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերից աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները (այդ թվում՝ նյութական օգնությունը)
- [4] տողում նշվում են [3] տողում նշված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված կենսաթոշակային, զբաղվածության, պարտադիր սոցիալական ապահովության վճարները
- [5] տողում նշվում է [1] տողում նշված քաղաքացիաիրավական պայմանագրերի, [3] տողում նշված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով արդյունքը (տող[1]-տող[2])+(տող[3]-տող[4]), որը տեղափոխվում է [24] տող (եթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերում)
- [6] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից՝ ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող տարածքների օտարումից եկամուտը
- [7] սյունակում նշվում են եկամտի այդ տեսակի համար հարկի սահմանված դրույքաչափերը
- [8] սյունակում նշվում են [9], [10], [11] և [12] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտահարկի գումարները (սյունակ [6]xսյունակ[7])
- [13] տողում նշվում է ռոյալթիներից, տոկոսներից, վարձավճարներից և գույքի օտարման դիմաց եկամտից հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[9]/սյունակ[8]+տող10/սյունակ[8]+տող11/սյունակ[8]+տող12/սյունակ [8])

Բաժին II Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները

| | | |
|---|------|--|
| Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները | [14] | |
| Ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը | [15] | |
| Նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը | [16] | |
| Ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը | [17] | |

- [14] տողում նշվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները
- [15] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով նվազեցվող ծախսերը
- [16] տողում նշվում է նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը
- [17] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը (տող[14]-տող[15]-տող[16]), ընդ որում՝ եթե արդյունքը բացասական է, ապա [17] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ և կրած

վնասը տեղափոխվում է հաջորդ տարի (հետագա հաշվարկում հաշվի չի առնվում), իսկ եթե դրական է, ապա այն տեղափոխվում է տող[25]

Բաժին III. Ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի եկամուտները

| Ամիս | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|----------|---|----|-----|----|---|----|-----|------|----|------|----|-----|
| [18] | | | | | | | | | | | | |
| [19] | | | | | | | | | | | | |
| [20] | | | | | | | | | | | | |
| [21] | | | | | | | | | | | | |
| [22] | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | [23] | | |

- [18] տողում լրացվում են հարկային գործակալներից ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկային գումարները, ինչպես նաև նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [19] տողում նշվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար անձնական նվազեցման ամսական մեծությունը
- [20] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [21] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[18]-տող[19]-տող[20])
- [22] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([21] տողում նշված) հաշվարկված եկամտահարկը
- [23] տողում նշվում է [22] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

Բաժին IV. Տարեկան եկամտահարկի հաշվարկը

| | |
|---|------|
| Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունքը | [24] |
| Ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը | [25] |
| Տարեկան եկամուտների ստացման ամիսները | [26] |
| Անձնական նվազեցումների տարեկան մեծությունը | [27] |
| Հարկվող եկամուտը | [28] |
| Բարեգործական և այլ անհատույց հատկացումներ | [29] |
| Տարեկան հարկվող եկամուտը | [30] |
| Տարեկան հարկվող եկամտից եկամտահարկը | [31] |
| Տարվա համար հաշվարկված եկամտահարկը | [32] |
| Նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը | [33] |
| Ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկի գումարը | [34] |
| Եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկը | [35] |
| Տարվա համար վճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները | [36] |
| Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումարը | [37] |
| Այլ պետություններում պահված հարկի գումարը | [38] |
| Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մասը | [39] |
| Հարկային արտոնությունների գումարը | [40] |
| Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտահարկի գումարը | [41] |
| Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման) | [42] |

- [24] տողում նշվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքը (տող[5])
- [25] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը (տող[17])
- [26] տողում նշվում է տարվա ամիսների թիվը, որոնց վերաբերվում են [1], [3] և [14] տողերում նշված եկամուտները
- [27] տողում նշվում է անձնական նվազեցումների տարեկան մեծությունը (տող[26]x/անձնական նվազեցման ամսական մեծությունը/)
- [28] տողում նշվում է հարկվող եկամտի գումարը {(տող [24]+տող [25])-տող[27]}
- [29] տողում նշվում է տարվա ընթացքում կատարված բարեգործական և այլ անհատույց հատկացումների նվազեցվող գումարը (տող [28]-տող[28]/1,05)

- [30] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեությունից, քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերից տարեկան հարկվող եկամտի գումարը (տող[28]-տող[29])
- [31] տողում նշվում է [30] տողում նշված տարեկան հարկվող եկամտից (տարեկան դրույքաչափերով) հաշվարկված եկամտահարկի գումարը
- [32] տողում նշվում է տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[13]+տող[23]+տող[31])
- [33] տողում նշվում է հաշվետու տարում հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարը՝ որպես եկամտահարկի եռամսյակային գումարների հանրագումար
- [34] տողում նշվում է ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկը (տող[32] և տող[33] առավելագույնը)
- [35] տողում նշվում է նախորդ և հաշվետու տարիներում վճարված՝ եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկի գումարը (հաջորդ տարիներ փոխանցվող եկամտահարկի նվազագույն գումարը)
- [36] տողում նշվում է հարկային տարվա համար վճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները
- [38] և [39] տողերում նշվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) եկամտահարկը (օտարերկրյա պետության համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և եկամտահարկի այն գումարը, որի չափով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտահարկը
- [40] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր գումարը
- [41] տողում նշվում է տարեկան եկամտահարկից նվազեցման ենթակա գումարը (տող[36]+տող[37]+տող[39]+տող[40])
- [42] տողում նշվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտահարկի գումարը (տող[34]-տող[41])՝ բացասական արդյունք նշվում է փակագծերի մեջ)
- սույն հաշվարկում ռեզիդենտները ներառում են Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, իսկ ոչ ռեզիդենտները՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները

**Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարները
(ըստ եռամսյակների)**

| Եռամսյակ | I | II | III | IV | Ընդամենը |
|----------|---|----|-----|----|----------|
| Գումար | | | | | |

| |
|---------------------------------------|
| Հաշվարկը ներկայացնողի ստորագրությունը |
|---------------------------------------|

Հավելված 1

| | |
|---|---|
| Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի | Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից) |
|---|---|

| | | | |
|--|-----------------------|---------------|------------|
| ՀԱՇՎԱՐԿ | (200__թ. __ եռամսյակ) | ճշտված | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | [1] | | |
| Կազմակերպության անվանումը | [2] | | |
| Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը, ազգանունը | [3] | | |
| Գտնվելու (բնակության) վայրը | [4] | | |
| Հեռախոսը | [5] | | |
| Հաշվարկի ներկայացման ամսաթիվը | [6] | | |
| | | Չափի միավոր | Հազար դրամ |

- [1] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրական ձևը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) բնակության վայրը
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) աշխատանքային հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է հարկային մարմին հաշվարկի ներկայացման ամսաթիվը

| ՀՀ քաղաքացիներին վճարված (հաշվարկված) եկամուտների տեսակը | Եկամուտների գումարը ըստ ամիսների [7] | Պահված հարկի գումարը ըստ ամիսների [8] | | |
|--|--------------------------------------|---------------------------------------|---|---|
| Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ [9] | | | | |
| 30.900 դրամից ոչ ավել [9ա] | | | | |
| <i>աշխատողների թվաքանակ [9ա-1]</i> | | x | x | x |
| 113.400 դրամից ոչ ավել [9բ] | | | | |
| <i>աշխատողների թվաքանակ [9բ-1]</i> | | x | x | x |
| 113.400 դրամից ավել [9գ] | | | | |
| <i>աշխատողների թվաքանակ [9գ-1]</i> | | x | x | x |
| Այլ աշխատանքի վարձատրություն [10] | | | | |
| <i>աշխատողների թվաքանակ [10-1]</i> | | x | x | x |
| Ռոյալթի [11] | | | | |
| Տոկոս [12] | | | | |
| Շահաբաժին [13] | | x | x | x |
| Խաղատներում, շահումներով խաղերում շահում [14] | | x | x | x |
| Մրցույթների, մրցությունների մրցանակ [15] | | | | |
| Վիճակախաղերի շահում [16] | | x | x | x |
| Նվիրատվություն, օգնություն [17] | | | | |
| Ապահովագրական հատուցում [18] | | x | x | x |
| Գույքն օտարելու դիմաց վճարված եկամուտ [19] | | | | |
| Վարձակալական վճար [20] | | | | |
| Ապահովագրավճար [21] | | | | |
| Առանց հիմնավորող փաստաթղթերի վճարում [22] | | | | |
| Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ [23] | | x | x | x |
| Այլ եկամուտներ [24] | | | | |
| <i>Ընդամենը [25]</i> | | | | |

- [7] այունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը
- [8] այունակներում նշվում են [7] այունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [9] տողում նշվում է [9ա], [9բ] և [9գ] տողերի հանրագումարը
- [9ա], [9բ], [9գ] տողերում նշվում են տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ վճարված նյութական օգնության և ապահովագրական նպաստների /բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների/ գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009թ. հաշվետու

ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [9ա-1], [9բ-1], [9գ-1] տողերում՝ տվյալ ամսում այդ եկամուտներին համապատասխանող վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՝ հաշվարկների կամ վճարումների թիվը)

- [10] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [10-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [9] և [10] տողերում նշված եկամուտներ, ապա [10-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)
- [11]-[24] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, ընդ որում՝ [17] տողը վերաբերվում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին, [21] տողում չեն նշվում պարտադիր սոցիալական ապահովության վճարները, [22] տողում նշվում են Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի օպ Էնթակետի համաձայն վճարված եկամուտների և դրանցից հաշվարկված եկամտահարկի գումարները
- [25] տողում նշվում է [9]-[24] տողերի հանրագումարը
- նվազեցվող եկամուտները (բացառությամբ՝ [13], [14], [16] և [18] տողերում նշվածների) հաշվարկում չեն արտացոլվում

| Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հայաստանյան աղբյուրներից վճարված (հաշվարկված) եկամուտների տեսակը | Եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [26] | Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [27] | | |
|---|--|---|---|---|
| Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ [28] | | | | |
| 30.900 դրամից ոչ ավել [28ա] | | | | |
| աշխատողների թվաքանակ [28ա-1] | | x | x | x |
| 113.400 դրամից ոչ ավել [28բ] | | | | |
| աշխատողների թվաքանակ [28բ-1] | | x | x | x |
| 113.400 դրամից ավել [28գ] | | | | |
| աշխատողների թվաքանակ [28գ-1] | | x | x | x |
| Այլ աշխատանքի վարձատրություն [29] | | | | |
| աշխատողների թվաքանակ [29-1] | | x | x | x |
| Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ [30] | | x | x | x |
| <i>Պասիվ եկամուտներ</i> | | | | |
| - ռոյալթիներ [31] | | | | |
| - տոկոսներ [32] | | | | |
| - շահաբաժիններ [33] | | x | x | x |
| - խաղատներում, շահումներով խաղերում շահում [34] | | | | |
| - մրցույթների, մրցությունների մրցանակներ [35] | | | | |
| - վիճակախաղերի շահումներ [36] | | | | |
| - նվիրատվություն, օգնություն [37] | | | | |
| - ապահովագրական հատուցում [38] | | | | |
| - գույքն օտարեկոց արժեքի հավելած [39] | | | | |
| - վարձակալական վճար [40] | | | | |
| - փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտ [41] | | | | |
| - ապահովագրավճար [42] | | | | |
| Այլ եկամուտներ [43] | | | | |
| <i>Ընդամենը [44]</i> | | | | |

- [26] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը
- [27] սյունակներում նշվում են [26] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) հարկի գումարը
- [28] տողում նշվում է [28ա], [28բ] և [28գ] տողերի հանրագումարը
- [28ա], [28բ], [28գ] տողերում նշվում է տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության և ապահովագրական նպաստների /բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների/ գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, իսկ [28ա-1], [28բ-1], [28գ-1] տողերում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՝ հաշվարկների կամ վճարումների թիվը)
- [29] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [29-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած

Ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [28] և [29] տողերում նշված եկամուտներ, ապա [29-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)

- [30]-[43] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, ընդ որում՝ [30] տողը վերաբերվում է ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտներին, [37] տողը վերաբերվում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին
- [44] տողում նշվում է [28]-[43] տողերի հանրագումարը

| | | | | | |
|--|--|--|---|--|--|
| Մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ 01.01.2009թ.-ից հետո փաստացի վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | Վճարված եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [45] | | Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [46] | | |
| | | | | | |

- [45] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված՝ մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկային մեծությունը (որը ներառված է նախորդ աղյուսակներում)
- [46] սյունակներում նշվում են [45] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար) _____
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

Գլխ.հաշվապահ _____
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հաշվարկը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկային մարմին: Հաշվարկը առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը (անհատ ձեռնարկատիրոջը, նոտարին):

Հավելված 2

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին

| |
|---|
| Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից) |
|---|

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(200 թ.)

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) տվյալները

| | | | | | | | |
|--|-----|-------------|------------|--|--|--|--|
| Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | [1] | | | | | | |
| Կազմակերպության անվանումը | [2] | | | | | | |
| Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը, ազգանունը | [3] | | | | | | |
| Գտնվելու (բնակության) վայրը | [4] | | | | | | |
| Հեռախոսը | [5] | | | | | | |
| Տեղեկության ներկայացման ամսաթիվը | [6] | | | | | | |
| | | Չափի միավոր | Հազար դրամ | | | | |

- [1] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպարավական ձևը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) բնակության վայրը
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է հարկային մարմնի տեղեկությունների ներկայացման ամսաթիվը

Տվյալներ եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց մասին

Աղյուսակ

| N | Անունը, ազգանունը | Անձնագիր | | Քաղաքացիությունը | Բնակության հասցեն | | Սոցիալական քարտի համարը | Վճարված եկամուտների գումարը |
|---|-------------------|-----------------|---------|------------------|-------------------|---------------|-------------------------|-----------------------------|
| | | սերիան և համարը | տրված է | | մշտական | ՀՀ-ում ժամվոր | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

- [1] սյունակում նշվում է տեղեկության հերթական համարը
- [2] սյունակում նշվում են ֆիզիկական անձի ազգանունը և անունը (ամբողջությամբ)
- [3] սյունակում նշվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը
- [4] սյունակում նշվում է լիազորված մարմնի անվանումը (կողը) և նրա կողմից անձնագրի տրման ամսաթիվը
- [5] սյունակում նշվում է ֆիզիկական անձի քաղաքացիությունը (ՀՀ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ)
- [6] սյունակում նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)

- [7] պունակում նշվում է ֆիզիկական անձի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր բնակության հասցեն
- [8] պունակում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)
- [9] պունակում նշվում է հաշվետու տարում ֆիզիկական անձին փաստացի վճարված բոլոր եկամուտների (բացառությամբ՝ նվազեցվող եկամուտների) հաշվարկային մեծությունը
- [10] պունակում նշվում են [9] պունակում նշված եկամուտներից պահված (գանձված) հարկի գումարները
- [11] պունակում նշվում են [9] պունակում նշված եկամուտներից պահված (գանձված) պարտադիր սոցիալական ապահովության վճարը (3%)
- [12] պունակում նշվում են [9] պունակում նշված եկամուտներից ֆիզիկական անձին փաստացի վճարված գումարները

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Գլխ.հաշվապահ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի

Փաստաթղթի հերթական համարը N _____
(լրացվում է հարկային մարմնի կողմից)

Ամփոփ հաշվարկ

(200__թ.__ եռամսյակ)

| | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|--|
| Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) [1] | | | | | | | |
| Կազմակերպության անվանումը [2] | | | | | | | |
| Անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը [3] | | | | | | | |
| Գտնվելու (բնակության) վայրը [4] | | | | | | | |
| Հեռախոս [5] | | | | | | | |
| Հաշվարկի ներկայացման ամսաթիվը [6] | | | | | | | |

- [1] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպչի անվանական տեսակը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) իրավաբանական (բնակության) հասցեն
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է հարկային մարմին հաշվարկի ներկայացման ամսաթիվը

| Ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների տեսակը | Վճարված եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [7] | Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [8] | | |
|---|---|--|---|---|
| Ապահովագրական հատուցումներ [9] | | | | |
| Վերապահովագրական վճարներ [10] | | | | |
| Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտներ [11] | | | | |
| Շահաբաժիններ [12] | | | | |
| Տոկոսներ [13] | | | | |
| Ռոյալթիներ [14] | | | | |
| Գույքի վարձակալության դիմաց եկամուտներ [15] | | | | |
| Գույքի արժեքի հավելած [16] | | | | |
| Արտաքին տնտեսական գործից եկամուտներ [17] | | x | x | x |
| Այլ եկամուտներ [18] | | | | |
| Ընդամենը [19] | | | | |

- [7] սյունակում նշվում է փաստացի վճարված եկամուտների հաշվարկային մեծությունը
- [8] սյունակում նշվում է [7] սյունակում նշված եկամուտներից պահված (գանձված) շահութահարկի գումարը
- [17] տողում նշվում են արտաքին տնտեսական գործունեությունից ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտները
- [18] տողում նշվում են ոչ ռեզիդենտին վճարված՝ [9]-[17] տողերում չնշված այլ եկամուտներ
- [19] տողում նշվում է [9]-[18] տողերի հանրագումարը

| | | | |
|----------------------------|--|--|--|
| Մնացորդը ամսվա սկզբին [20] | | | |
| Պահված հարկի գումարը [21] | | | |

| | | | |
|------------------------------|------|--|--|
| Բյուջե վճարված հարկի գումարը | [22] | | |
| Մնացորդը ամսվա վերջում | [23] | | |

- [20] տողում նշվում է հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ փաստացի վճարված եկամուտներից պահված, սակայն բյուջե չփոխանցված շահութահարկի գումարը, կամ բյուջե ավել վճարված շահութահարկի գումարը
 - [21] տողում նշվում է եռամսյակի ընթացքում փաստացի վճարված եկամուտներից հաշվարկված շահութահարկի գումարը՝ ըստ ամիսների ([19] տողի [8] սյունակ)
 - [22] տողում նշվում է եռամսյակի ընթացքում բյուջե վճարված շահութահարկի գումարը՝ ըստ ամիսների
 - [23] տողում նշվում է հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվան հաջորդող առաջին ամսվա 1-ի դրությամբ փաստացի վճարված եկամուտներից պահված, սակայն բյուջե չփոխանցված ահութահարկի գումարը, կամ բյուջե ավել վճարված շահութահարկի գումարը (տող[20]+տող[21]-տող[22])
- եթե [20] կամ [23] տողերում թվերը բացասական են (այսինքն՝ բյուջե փոխանցված շահութահարկի գումարը գերազանցում են փաստացի վճարված եկամուտներից պահված շահութահարկի գումարին), ապա դրանք ցույց են տրվում փակագծերի մեջ

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխ. հաշվապահ _____
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Ամփոփ հաշվարկը լրացվում է 2 օրինակից, որը ներկայացվում է հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը (անհատ ձեռնարկատիրոջը):

Պարտադիր սոցիալական ապահովության

Հավելված 3ա

Փաստաթղթի հերթական համարը

**վճարների եռամսյակային հաշվետվություն
(հաշվետու եռամսյակին նախորդող եռամսյակի
յուրաքանչյուր ամսում 5-ից ոչ ավելի վարձու
աշխատող ունեցող գործատուների համար)**

N _____
(լրացվում է հարկային մարմնի
կողմից)

Հաշվետու եռամսյակ՝ 200__թ. _____ եռամսյակ

| | | | | | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|--|--|-------------|------------|
| Պետական գրանցման համարը[1] | | | | | | | | | | | |
| Պետական գրանցման ամսաթիվը [2] | | | | | | | | | | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը(ՀՎՀՀ)[3] | | | | | | | | | | | |
| Ապահովադրի կոդը [4] | | | | | | | | | | | |
| Կազմակերպության անվանումը [5] | | | | | | | | | | | |
| Ֆիզիկական անձի անուն, ազգանունը [6] | | | | | | | | | | | |
| Գործունեության ոլորտ(ներ)ը [7] | | | | | | | | | | | |
| Գտնվելու (բնակության) վայրը [8] | | | | | | | | | | | |
| Հեռախոս [9] | | | | | | | | | | | |
| Հաշվետվության ներկայացման ամսաթիվը [10] | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | Չափի միավոր | Հազար դրամ |

- [1] և [2] տողերում նշվում է գործատուի պետական գրանցման համարը և օրը, ամիսը, տարին
- [3] տողում նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [4] տողում նշվում է ապահովադրի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) կոդը
- [5] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը
- [6] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [7] տողում նշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման ոլորտ(ներ)ը, իսկ նոտարի կողմից նշվում է նոտարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ
- [8] և [9] տողերում նշվում են կազմակերպության գտնվելու վայրը և աշխատանքային հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի բնակության վայրը և աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [10] տողում նշվում է հարկային մարմին հաշվետվության ներկայացման օրը, ամիսը, տարին

Աղյուսակ 1

| Սոցիալական վճարների օբյեկտի (ԱՎՈԻՄ) միջակայքերը և քանակը | Հաշվարկված ԱՎՈԻՄ [11] | Սոցիալական վճար [12] | | | |
|---|--------------------------|-------------------------|---|---|---|
| Վարձու աշխատողների մասով [13] | | | | | |
| 20,0 հազ. դրամից ոչ ավել [13ա] | | | | | |
| վարձու աշխատողների թվաքանակ [13ա-1] | | | x | x | x |
| 100,0 հազ. դրամից ոչ ավել [13բ] | | | | | |
| վարձու աշխատողների թվաքանակ [13բ-1] | | | x | x | x |
| 100,0 հազ. դրամից ավել [13գ] | | | | | |
| վարձու աշխատողների թվաքանակ [13գ-1] | | | x | x | x |
| Այլ աշխատողների մասով [14] | | | | | |
| 20,0 հազ. դրամից ոչ ավել [14ա] | | | | | |
| աշխատողների թվաքանակ [14ա-1] | | | x | x | x |
| 100,0 հազ. դրամից ոչ ավել [14բ] | | | | | |
| աշխատողների թվաքանակ [14բ-1] | | | x | x | x |
| 100,0 հազ. դրամից ավել [14գ] | | | | | |

| | | | | | | | |
|-----------------------------|---------|--|--|--|---|---|---|
| աշխատողների թվաքանակ | [14q-1] | | | | x | x | x |
| Օտարերկրացիների մաս | [15] | | | | | | |
| վարձու աշխատողների թվաքանակ | [15-1] | | | | x | x | x |
| Ընդամենը | [16] | | | | | | |

- [11] պլանակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները (ԱՎՈՒՄ)
- [12] պլանակներում նշվում են [11] պլանակներում նշված ԱՎՈՒՄ-ների նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարները (սոցիալական վճարները)
- [13] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) ՀՀ քաղաքացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[13ա]+տող[13բ]+տող[13գ])
- [13ա], [13բ], [13գ] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատող ՀՀ քաղաքացիներին նշված չափերով հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [13ա-1], [13բ-1] և [13գ-1] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ աշխատող վարձու աշխատող ՀՀ քաղաքացիների թվաքանակը, որոնց հաշվարկված ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [13ա], [13բ] և [13գ] տողերում
- [14] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրերով (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում) աշխատող (այլ աշխատող) ՀՀ քաղաքացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[14ա]+տող[14բ]+տող[14գ])
- [14ա], [14բ], [14գ] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից այլ աշխատող ՀՀ քաղաքացիներին նշված չափերով հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [14ա-1], [14բ-1] և [14գ-1] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ այլ աշխատող ՀՀ քաղաքացիների թվաքանակը, որոնց ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [14ա], [14բ] և [14գ] տողերում
- [15] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (օտարերկրացիներին) հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները
- [15-1] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող (վարձու աշխատող) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (օտարերկրացիների) թվաքանակը, որոնց ԱՎՈՒՄ-ները և սոցիալական վճարները նշված են [15] տողում
- [15] և [15-1] տողերը լրացվում են, եթե վարձու աշխատող օտարերկրացիները ցանկանում են կատարել սոցիալական վճարներ գործատուից ստացված ԱՎՈՒՄ-ների գծով
- [16] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի մոտ վարձու և այլ աշխատող ՀՀ քաղաքացիներին, վարձու աշխատող օտարերկրացիներին հաշվարկված ԱՎՈՒՄ-ների և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարները (տող[13]+տող[14]+տող[15])

Աղյուսակ 2

| | | |
|--|---------------|--------------------------------------|
| Առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ և դրա նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարներ | ԱՎՈՒՄ [17] | Վճարված ԱՎՈՒՄ-ի սոցիալական վճար [18] |
|--|---------------|--------------------------------------|

| | | | | | | | |
|-----------------------------------|--|--|--|---|---|---|--|
| Մնացորդը ամսվա սկզբին [19] | | | | | | | |
| Վճարվել է տվյալ ամսում ԱՎՈՒՄ [20] | | | | | | | |
| Վճարված ԱՎՈՒՄ-ների քանակը [21] | | | | x | x | x | |
| Մնացորդը ամսվա վերջում [22] | | | | | | | |

- [17] սյունակներում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ները
- [18] սյունակներում նշվում են [17] սյունակներում նշված ԱՎՈՒՄ-ների նկատմամբ հարկման տարբեր կարգերին (ընդհանուր, հաստատագրված վճարով, պարզեցված հարկով) համապատասխան հաշվարկված սոցիալական վճարների գումարները (հաշվարկային պարտքերը)
- [19] տողում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների և սոցիալական վճարների հաշվարկային պարտքերի մնացորդները ամսվա սկզբին
- [20] տողում նշվում են տվյալ ամսում առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների վճարումները (գումարը) և դրանց նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարները
- [21] տողում նշվում են տվյալ ամսում առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների վճարումները (քանակը)
- [22] տողում նշվում են առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ-ների և սոցիալական վճարների հաշվարկային պարտքերի մնացորդները ամսվա վերջում (տող[19]-տող[20])

Աղյուսակ 3

| Ապահովագրական նպաստներ | Նպաստա- ռուներ [23] | Օրեր [24] | | | | | | Վճարված գումարը [25] | | |
|--|---------------------------|-----------|---|---|---|---|---|----------------------|-----|-----|
| | | | | | | | | | | |
| Հիվանդության նպաստ [26] | | | | | | | | | | |
| Պրոթեզավորման նպաստ [27] | | | | | | | | | | |
| Առողջարանային բուժման նպաստ [28] | | | | | | | | | | |
| Հղիության և ծննդաբերության նպաստ [29] | | | | | | | | | | |
| Ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ [30] | | | | | | | | | | |
| Թաղման նպաստ [31] | | | | | | | | | | |
| Ընդամենը [32] | | | | | | | | | | |
| Վերականգնված միջոցներ [33] | x | x | x | x | x | x | x | () | () | () |

- [23] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուից ապահովագրական նպաստներ ստացած վարձու աշխատողների (նպաստառուների) թիվը
- [24] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստներ ստացած վարձու աշխատողների (նպաստառուների) օրերի թիվը
- [25] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստները և ՀՀ պետական բյուջեից վերականգնված միջոցները
- [26], [27], [28], [29], [30] և [31] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական նպաստների յուրաքանչյուր տեսակների և թաղման նպաստի վերաբերյալ տվյալները (նպաստառուների թիվը, օրերի թիվը, վճարված գումարները)
- [32] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների հանրագումարը (տող[26]+տող[27]+տող[28]+ տող[29]+տող[30]+տող[31])

- [33] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) ՀՀ պետական բյուջեի վերականգնված՝ նախկինում գործատուի միջոցների հաշվին վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների գումարները

Աղյուսակ 4

| | | | | |
|--|------|-----|-----|-----|
| Հաշվարկված սոցիալական վճարի գումարը | [34] | | | |
| Կատարված ծախսեր | [35] | () | () | () |
| Վճարվող սոցիալական վճարի ամսվա գումարը | [36] | | | |
| Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար1 | [37] | | | |
| Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար2 | [38] | | | |

- [34] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարը (տող[16]/սյունակ[12]+տող[20]/սյունակ[18])
- [35] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) սոցիալական վճարների հաշվին գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված ապահովագրական և թաղման նպաստների ընդհանուր գումարը (տող[32]/սյունակ[25])
- [36] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) սոցիալական վճարների և դրանց հաշվին կատարված ծախսերի դրական տարբերությունը (տող[34]+տող[35], եթե տող[34]>տող[35]) կամ 0 (եթե տող[34]=<տող[35])
- [37] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60,0 հազ. դրամ)
- [38] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) ՀՀ հարկային մարմինների կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60,0 հազ. դրամ)

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Գլխ.հաշվապահ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Հաշվետվությունը լրացվում է 2 օրինակից: Հաշվետվությունը առձեռն հարկային մարմիններ կայացնելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է գործատուին: